№ 101 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 1888 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 № 101

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
Իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տիկին Նիկիֆորովայի գործը. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչութեան շրջաբերականը. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բարոյականութեան զարդացումը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ ՆԻԿԻՖՈՐՈՎԱՅԻ ԳՈՐԾԸ

Սեպտեմբերի 3-ին սկսվեցաւ Թիֆլիսի նահանգական դատարանում տիկին Նիկիֆորովայի գործի քննութիւնը։ Ինչպէս յայտնի է Նիկիֆորովա մեղադրվում է պօրուչիկ Ն. Պեկարսկուն սպանելում։

Դատարանը բացվում է հետևեալ կազմակերպութեամբ. Նախագահում է դատարանի նախագահ Ֆ. Բիկով, անդամներն են՝ Վ. Կարնօվիչ և իշխ. Բեբութով, մեղադրում է պրօկուրօր Ա. Զայկովսկի, պաշտպանում է երդուեալ հաւատարմատար Զէմէսով։

Դահլիճը կատարելապէս լի է հասարակութեամբ. միայն տղամարդիկ են լցնում դահլիճը, քանի որ դատարանի կարգադրութեամբ կանանց և անչափահասներին դահլիճի մուտքը արգելված էր այդ գործի քննութեան ժամանակ։ Դատաւորների ետևից երևում են բարձրաստիճան անձինք, դատաւորների առջև մի կողմից սեղան է դրված էկսպերտների համար, միւս կողմից մամուլի ներկայացուցիչների համար։ Մեղադրեալների նստարանի վրա նստած է բանտային երկու պահապանների մէջտեղ տիկին Նիկիֆորովա։ Նա դեռ երիտասարդ, 24 տարեկան, և շատ գեղեցիկ կին է, կատարելապէս սևաւորված։ Նախագահի հարցին նա պատասխանում է, որ իրան անուանում են Ալէքսանդրա Լիչինա, պսակված էր ծովային կապիտան Նիկիֆորովի հետ, բայց բաժանվեցաւ նրանից և այժմ կրում է իր օրիորդական Լիչինա ազգանունը։

Վկաներից մէկը, Լիչինայի աղախինը, Նատալիա Շախիրեվա, բացակայ է. նա Պետերբուրգ է գնացել, բայց նրա գրաւոր ցուցմունքը կարդացվում է դատարանում։

Պաշտպանը յայտնում որ դատարանը չը թոյլատալով պաշտպանին գրաւոր ազդարարութիւններիմ միջոցով հրաւիրել վկաներին, զրկեց նրան բացի մինից վկաներ ունենալու միջոցից։ Շատերը, մանաւանդ ծառայողները, հրաժարվում են գալ դատարան, երբ հրաւիրվում են պաշտպանի կողմից, առանց պաշտօնական ազդարարութեան։ Զէմէսով յայտնում է, որ մեղադրեալի իրաւունքները խախտված են քննիչ իշխանութեան կողմից, քանի որ նրան չը տրվեցաւ նախնական քննութեան արձանագրութիւնների պատճէնները, բացի սրանից, պաշտպանի կարծիքով, մեղադրվածի մտաւոր կամ հոգեկան կարողութեան քննութիւնը անկանոն կերպով է կատարված։

Կարդացվում է մեղադրական ակտը, որից երևում է, որ 1888 թ-ի 11-ին ապրիլի, գիշերը, Թիֆլիսում, Ելիսավետինսկի փողոցում գտնված № 87 տան մէջ, Նիկիֆորովայի բնակարանում, սպանվեցաւ պօրուչիկ Նիկոլայ Պեկարսկի։ Գիշերվայ ժամը 3-ին Պեկարսկի և Նիկիֆորովա տուն վերադարձան և Պեկարսկի մնաց նոյն բնակարանում քնելու համար։ Աղախինը վկայում է, որ շուտով նրանց մէջ ծագեց վէճ և կռիւ, այնուհետև երբ նրանք պառկեցին, իսկ ինքն աղախինը պառկեց իր սենեակում, նա յանկարծ լսեց միմեանց վրա հետևող երկու ձայներ, իբր թէ դուռն էին յետ անում և անմիջապէս նրանից յետոյ լսեց սեղանատան մէջ Պեկարսկու ոտների ձայնը և նրա աղաղակը. «Նատալիա.... օգնեցէք»։ Անմիջապէս իջնելով անկողնուց աղախինը բացեց դուռը և տեսաւ Պեկարսկուն, որը մի վայրկեանից յետոյ վայր ընկաւ դրան չէմքի մօտ։ Այդ ժամանակ ննջարանից դուրս եկաւ Նիկիֆորովա, բէվոլվերը ձեռքին բռնած, ուղղելով բէվոլվերի բերանը դէպի իր կուրծքը։ Շախիրեվա խլեց նրանից բէվոլվերը, բերեց բնակարանում եղած ամոնիակի սրուակը և երկու կանայք միասին սկսեցին քսել Պեկարսկու ճակատը, որպէս զի նրան ուշքի բերեն, բայց նա արդէն ուշքի չեկաւ և մի քանի վայրկեանից յետոյ մեռաւ։

Այնուհետև մեղադրական ակտը ծանօթացնում է մեզ թէ բնակարանի մէջ արած սկզբնական քննութեան հետ, թէ բժիշկների արած մեռածի մարմնի հետազօտութեան հետ և թէ վերջապէս էկսպերտների ցուցմունքների հետ՝ բէվոլվերի և արձակված գնտակների տեսակի, և գնտակի մակերևոյթի վրա գտնված մարդկային ոսկորների մանր կտորտանքների և արիւնի հետքերի վերաբերմամբ։ Սկզբնական քննութեան ժամանակ Նիկիֆորովա յայտնեց, որ ունենալով վէճ ու անհամաձայնութիւն Պէկարսկու հետ, նա անկողնուց վերկացաւ, վերցրեց բէվոլվերը և ուզում էր իրան սպանել, բայց Պէկարսկի անմիջապէս իջնելով անկողնու միւս կողմից, սկսեց խլել նրանից բէվոլվերը. Նիկիֆորովա չէ յիշում, որ բէվոլվերը արձակվեցաւ, միայն յիշում է մի թոյլ շրխկոց, այնուհետև յիշում է, որ Պէկարսկի յանկարծ ձեռքից թողնելով բէվոլվերը, որը ուզում էր խլել, վազեց դէպի սեղանատունը, աղաղակելով «Նատալիա.... օգնեցէք»։ Մեղադրական ակտը ջրում է Նիկիֆորովայի այդ ցուցմունքը, պնդելով որ Պէկարսկի անկարող էր ջանալ խլել բէվոլվերը Նիկիֆորովայի ձեռքից, քանի որ բէվոլվերի առաջին հարուածով անմիջապէս վիրաւորվեցաւ նրա աջ ձեռքը, իսկ բէվոլվերի երկրորդ հարուածը մեռածը ստացաւ մէջքի մէջ, երբ արդէն իր մէջքը դարձրել էր դէպի մեղադրվածը։

Այդ պատճառով Նիկիֆորովա մեղադրվում է Պէկարսկուն սպանելում՝ վրդոված և գրգռված դրութեան մէջ գտնվելով, մի յանցանք, որը նախատեսված է պատիժների մասին կանոնադրութեան 2-որդ բաժնի, 1455 յօդուածով։

Դատարանի նախագահի հարցմունքին՝ արդեօք մեղադրվածը ճանաչում է իրան մեղաւոր, Նիկիֆորովա կարճ կերպով պատասխանեց՝ «ոչ»։

Դատարանում ներկայ են վկաներ՝ բժիշկ Մօնտվիլ, որը հետազօտեց Պէկարսկու դիակը, պրիստաւ Կուզմինսկի, գնդապետ Վ. Իրուբով, պօրուչիկ Միխայլով, և երգիչ Լ. Ղ. Նոյնպէս ներկայ են էկսպերտներ Մրեվլով, Գօրալեվիչ, Մալինին, Գաուդէլին և Պավլովսկի, այնուհետև ֆարմացիայի մագիստր Օտտէն և զինավաճառ Գեչկէ։

Վկաները և էկսպերտները երդվում են և նախագահը դիմում է նրանց յորդորելով իրանց խղճի համեմատ, ճշմարտութեամբ ցուցմունքներ անել։

Վկաները հեռանում են դահլիճից և կարդացվում է Շախիրեվայի գրաւոր ցուցմունքը։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 22-ին

Եթէ մի որ և իցէ տեղից, լրագրութեան մէջ լինում է բողոք կամ տրտունջ գործակատարների կողմից, այդ բողոքների գլխաւոր կէտը լինում է այն, որ գործակատարները աղատութիւն չունեն, մինչև անգամ կիրակի օրերը ամբողջապէս փակված լինելով խանութներում։ Բայց տեսնենք արդեօք, Երևանի գործակատարների բողոքն էլ միայն նոյն կէտն է, թէ ուրիշ կէտեր ևս կան, որոնք աւելի վատթար են, քան թէ խանութներում ամեն օր անխտիր փակված լինելը։

Եթէ արդարութիւն գործ դրած լինեն, պէտք է խոստովանվենք, որ Երևանի գործակատարների դրութիւնը եռապատիկ աւելի վատթար է, քան թէ ուրիշ քաղաքների գործակատարներինը։ Երևանում գործակատարը (ինչպէս մի քանի անգամ էլ գրվել է «Մշակի» մէջ) միայն այն ժամանակ է ստանում մի չնչին դումար վարձ, երբ երկու երեք ամբողջ տարի ծառայած է լինում նոյն խանութում անվարձ, ինչպէս ասում են «հացափոր», բայց տեսնենք արդեօք երկու երեք տարի անվարձ ծառայող գործակատարը, ստանում է իր արժանաւորութեան համեմատ վարձ թէ ոչ. պարզ բան է, որ բոլորն էլ մեղ հետ վկայ են թէ ոչ։ Երբ խեղճ գործակատարի հայրը վերջապէս մի օր ներկայանում է իր որդու աղային և պահանջում է վարձ նշանակել, աղան մի փոքր «չիմ ու չու» անելուց յետոյ պատասխանում է, որ «քու որդուն այս տարի կը տամ տարեկան երեսուն կամ շատ շատ քառասուն ռուբլի»։ Երբ գործակատարի հայրը չէ համաձայնվում, ասելով՝ «շատ քիչ է», աղան պատասխանում է թէ «դրանից աւելի չեմ տայ, եթէ ուրիշ տեղ աւելի տուող կայ՝ տար ուրիշ տեղ»։ Գործակատարի հայրը ասում է. «ախր աղայ, իմ որդին երեք տարի քեզ մօտ է ծառայել, երբ դու աւելի չես տալիս, ուրիշը ինչպէս կը տայ», աղան պատասխանում է. «քո որդին երեք տարի իմ հացը կերել է, իմ շորը հագել է, դեռ առնտուր. էլ է սովորել. իմ որդուցս չեմ ջոկիլ, էլ ինչ ես ուզում»։ Երբ գործակատարի հայրը տեսնում է, որ աղան աւելի վարձ չէ տալիս, ստիպված քառասուն ռուբլով է համաձայնում. բայց վայ այն գործակատարին։ Հէնց այն օրից, որ նա վարձ ստացաւ, հէնց որ գործակատարի հայրը ոտը խանութից դուրս դրեց, աղան հաշուեհատիկների վրա սկսեց հաշուել. «տուածս քառասուն մանէթ է, բայց նա շատ ու քիչ «ղալամը» իմանալով, հաշիւներս կը պահի, մուշտարուն լաւ ճանապարհ կը դցի, խանութի ամեն բանը կանի, դեռ պատահած ժամանակ տանաբանն էլ կանի»։ Ձիշդ որ խեղճ գործակատարը կրակի մէջ է ընկնում. մինչև վերջը խանութում ծառայում է, բաւական չէ որ աղայի արհամարհանքը ու հայհոյանքը տանում է, երեկոներին էլ աղայի տան ծառայութիւններն է կատարում։ Ես անձամբ ճանաչում եմ մինչև անգամ տեղացի այնպիսի գործակատարներին, որոնք ծառայում են առաջ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Միւս երկու շրջանները՝ բարբարոսական և առևտրական—վերաբերում են պատմական ժամանակներին։ Բարբարոսական ֆազիսը կազմում է անդր-պատմական և պատմական շրջանների սահմանը, մի տեսակ անցողական ժամանակամիջոց, երբ մարդկութիւնը, ազատվելով իր ստոր, անասնական և վայրենական սովորութիւններից, մտնում է կատարեալ մարդկային կեանքի և գործունէութեան մէջ։ Եթէ մեր ժամանակի մարդկութիւնը չէ կարողանում հպարտանալ իր բարոյական զարդացումով, իր հասարակական և ընդհանուր մարդկային բարձր զգացմունքներով, ուրեմն բոլորովին իզուր կը լինէր նոյնը որոնել մեզանից նախորդ շրջանի, բարբարոսական ֆազիսում ապրող մարդկութեան մէջ։ Այստեղ մենք տեսնում ենք մի շարք զօրեղ և քաղաքակիրթ ազգութիւններ, ինչպէս են՝ եգիպտացիք, կենտրոնական և հարաւային Ամերիկայի մեծ կայսերութիւնները, Չինաստանը, Հնդկաստանը, հին սեմիտական ազգութիւնները, վերջապէս՝ Յունաստանը և Հռոմը, որոնց մէջ կուլտուրական զարդացումը հասել է ամենաբարձր կատարելութեան։ Բայց ինչ դրութեան է նրանցում հասարակական զգացմունքների, բարոյականութեան զարդացումը։ Բարոյականութեան կողմից այդ մեծ և փայլուն—քաղաքակիրթ ազգերը չունեն ոչ մի դրաւիչ, համակրելի յատկութիւն։ Ստրկութիւնը, մարդու կեանքի և անձնաւորութեան ոչնչութիւնը, հասարակական ծայրայեղ անիրաւութիւնները, իշխող և հպատակող դասակարդերի փոխադարձ կոպիտ, թշնամական յարաբերութիւնները, ամբոխի թշուառ և ընկած, արհամարհված դրութիւնը՝—ահա թէ ինչ բարոյական յատկութիւններ են նշմարվում այդ ժամանակի մարդկանց կեանքում։ Կլասիական փառաւոր Յունաստանը և Հռոմը, որոնց առաջ մենք սովորել ենք երկրպագութիւն անել, պաշտպանվում և ծաղկում էին լոկ ստրկութեան, հարստահարութեան ոյժով։ Բարձր դասակարդը միշտ ճնշում, հարստահարում էր ստորին մեծամասնութեանը, ապրում, զարդանում և փարթամանում էր բազմաթիւ ստրուկների աշխատութեան և արիւն-քրտինքի վաստակով։ Ցղամարդը իշխում, կառավարում էր կնոջը, պահելով նրան կատարեալ հնազանդութեան մէջ։ Ընտանիքի հայրը բռնաբարում էր տան մէջ ապրող բոլոր անդամների մարդկային ազատութիւնը, նրանց ընկերական և հասարակական իրաւունքները... Սակայն պէտք է աւելացնել, որ այս բոլորը կատարվում էր ոչ այնքան խիստ, գաղանային կերպով, ինչպէս առաջին երկու շրջաններում։ Սարկութիւնը, երկար ժամանակ տանջելով ու չարչարելով մարդկութեան մեծամասնութիւնը, այս երրորդ, բարբարոսական շրջանում սկսում է աւելի մեղմանալ։ Ստրկութիւնից ազատվողների թիւը հետզհետէ սկսում է շատանալ և, վերջապէս, ստրկական դրութիւնը ատիճանաբար մեղմանալով, առաջ է բերում աւելի ազատ ու ազատ կեանքի եղանակ—ճորտութիւնը։

Համեմատելով նախորդ բարոյական ֆազիսի հետ, այստեղ մենք տեսնում ենք, որ մարդու կեանքի և անձնաւորութեան գինը այնպէս չէ արհամարհված, չէ ստորացած ու ոչնչացած, որպէս առաջին՝ անասնական և վայրենական շրջաններում։ Իսկ այդ նշանակում է, որ մարդկութիւնը, առհասարակ, բարոյապէս կատարելագործվել, զարդացել է....

Վերջապէս՝ գալով մեր ժամանակի բարոյականութեանը, որ Լեռուրնօ անուանում է արդիւնաբերական, կամ առևտրական, պէտք է ընդհանրապէս նկատել, որ այժմեան մարդկութիւնը, չը նայելով իր այդքան բարձր կատարելութեան ու զարդացման, դարձեալ պարունակում է իր մէջ, հին ժամանակներից մնացած շատ և շատ բարոյական թերութիւններ ու արատներ։ Մենք դեռ ևս բոլորովին չենք ազատվել մեր նախորդների վայրենական, գաղանային յատկութիւններից.... Ցիրաւի, ներկայ եւրոպական հասարակութիւնների մէջ, ստրկութիւնը և ճորտային դրութիւնը գոյութիւն չունեն այն մտքով, ինչպէս որ հասկանում էին մեր նախորդները, «բայց մթթէ կարելի է մեզ թնդացնել օդը ազատութեան ազաղակներով»—հարցնում է Շ. Լեռուրնօ։ Մթթէ, ճշմարիտ, հարստահարութիւնը, անիրաւ ու անխիղճ գործերը, մարդկային անձնաւորութեան ու իրաւունքների ճնշումը անցած, գնացած բաներ են, հեռու են մեր ժամանակից....—Ո՛չ երբէք։ Նրանք միայն փոխել են իրանց արտաքին կերպը, քողաւորվել, ծածկվել են մեղանում։ Բարոյական սկզբունքները, օրէնքի, ճշմարտութեան գաղափարները—լոկ խօսքեր են մեր ժամանակում. նրանք շարունակ դուրս են գալիս մարդկանց բերանից, առանց գործնական մի հետևանքի, առանց իրականապէս երևալու՝ մեր ամեն գործերի ու վարվողութիւնների ժամանակ։ Ասել մի կերպ և գործել ուրիշ կերպ՝—ահա մեր ժամանակի մարդկանց սկզբունքը, նրանց բարոյական գլխաւոր յատկութիւնը, դէվիզը։

նակարգ խանութներում, այդ առաջնակարգ գործակատարներն անդամ չունեն ոչ իրանց արժանաւոր ռոճիկը և ոչ էլ որոշված գործերը. մի առաջնակարգ գործակատար, որի ռոճիկը չէ անցնում տարեկան 100—200 բուբլուց, այդպիսի գործակատարը կատարում է և հաշւապահի հաշիւները, գործակատարի գործերը, մինչև անդամ այն գործերը, որոնք յատուկ են միայն մշակներին կատարելու։ Մի խօսքով Երևանում գործակատարը մի կատարեալ կմախք է, որը ամենահնազանդութեամբ պիտի պատրաստ լինի կատարելու աղայի քմահաճոյքները։ Աղան այնպէս է վերաբերում գործակատարին, որպէս մի անշունչ առարկայի, որը առանց իր կամքի չէ կարող շարժվել և չը գիտէ կատարել նշանակված գործերը։ Խեղճ գործակատարը ստիպված է մինչև անդամ ըստրուկ դառնալ իրանից բարձր գործակատարին, որի դործ դրած իրաւունքները պակաս չեն աղայի իրաւունքներից։

Մի մարդ, որը ստիպված հնազանդվում է իր դառը ճակատագրին և մի քանի տասնեակ բուբլիների համար ամբողջ տարին կապվում է մի աղայի կամքին, մթթէ այդպիսի դէպքերում աղան այնքան անխիղճ պիտի դանվի, որ իր գործակատարի մէջ մեռցնելով ինքնաճանաչութեան զգացմունքները, մեռցնի ֆիզիկական և մտաւոր ոյժերն էլ իսպառ։

Մարդ զարմանում է, երբ տեսնում է արդարութեան փոխարէն անարդարութիւն, տեսնում է որ մարդկային բոլոր իրաւունքները ոտի տակ են ձգված։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, 5-ին սեպտեմբերի, ժամը 3-ին կէսօրից յետոյ, ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանը կայացրեց հետեւեալ վճիռը տիկին Նիկիֆորովայի գործի վերաբերմամբ. ճանաչելով Նիկիֆորովային մեղաւոր Պեկարսկուն նախամտածված նպատակով և գրգռված դրութեան մէջ սպանելում՝ զրկել նրան բոլոր իրաւունքներից և աքսորել նրան Իրկուտսկի նահանգը կեցութեան համար 3 տարով, այդ ժամանակամիջոցից յետոյ արդելելով նրան 10 տարվայ ընթացքում դուրս գալ առհասարակ Սիբիրի սահմաններից։

—

Կ. Պոլսի հայոց լրագիրների մեր վերջին ստացած համարներում կարդում ենք, որ Կ. Պոլսի Խառն Ժողովը իր վերջին նիստի մէջ Զմիւռնիայի առաջնորդական ընտրելիների ցուցակի մէջ մտցրել է և Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանի անունը։

—

Այս շաբաթ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային թատրոնում սկսում են առաջին անդամ երևալ նոր հրաւիրած երգիչները։ Չորեքշաբթի, օգոստոսի 8-ին, ներկայացվում էր Վերդիի «Ռիգոլետտո» օպերան, որի մէջ Ռիգոլետտոի դերը կատարում էր պ. Ցարատակովի։ Պարոնը բաւական յայտնի է ռուսաց թէ գաւառական և թէ մայրաքաղաքների բեմերի վրա. նա ունի ոչ շատ մեծ, բայց բաւական մշակված, դուրեկան և բոլոր բեգիստրներում հաւասար կերպով զարգացած բարիտոն. նրա արտասանութիւնը գեղեցիկ է և նա գիտէ իրան պահել բեմի վրա։ Պարոնը աջողութիւն ունեցաւ իր առաջին դէբիւտում։ Միւս օրը, հինգշաբթի, Գունոի «Ֆաուստ» օպերայի մէջ առաջին անդամ խաղացին պ.պ. Դերիւժինսկի Ֆաուստի դերում և Սալտիկով Վալենտինի դերում։ Այս երգիչները երկուսն էլ երիտասարդ են, երկուսն էլ առաջին անդամ են բեմ դուրս գալիս։ Մնացած երգիչները և երգչուհիները գրեթէ նոյն են, ինչ որ անցեալ սեզոնին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Օգոստոսի 25-ին, երեկոյեան դէմ, յորդահոս անձրևից և կարկտից առաջացած հեղեղը ծանր վնասներ է պատճառել թէ քաղաքին և թէ շրջակայ գիւղերին։ Քաղաքի Գետառ անուանված դետակը սաստիկ բարձրանալով, քարուքանդ է անում բոլոր կամուրջները և ափերից դուրս գալով, գրոհ է տալիս դէպի քաղաքը։ Բոլորովին փչացել է քաղաքի միջով անցնող մեծ ուղին, զգալի վնասվել է «Դամբրուլաղ» ասված քաղաքամասը, աւերվել են բաղմաթիւ այգիներ, քանդվել են տներ, խեղդվել են դաշտերում վրտնաբնակների երեխաները։ Օգոստոսի նոյն թւերում գրեթէ միաժամանակ տեղատարափ անձրևներ ու կարկուտ են տեղացել Երևանի ամբողջ նահանգում։ Աբարանի կողմերում հեղեղներկց վեց գիւղ փչացել են։ Ադուլիսի կողմերում ցորենները փտել են, այնպէս որ ագուլեցիք այժմ Քանաքեռից են ցորեն ասնում։ Ալէքսանդրօպոլում ևս մեծ վնասներ է պատճառել կարկուտը։ Ընդհանրապէս ցորենի բերքը, ինչպէս պատմում են, շատ պակաս էր այս տարի Ղարսի և Ալէքսանդրապօլի կողմերում։ Բամբակի բերքն էլ դեռ դառնան սկզբներին անընդհատ անձրևներից ու հեղեղներից էր մեծապէս վնասվել։ Խաղողն էլ թոյլ է ու տեղ-տեղ հիւանդացած»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Սեպտեմբեր ամիսն է, իսկ մեր թեմական դպրանոցի դրութիւնը տակաւին որոշված չէ։ Հոգաբարձուները տեսչի խնդիրը, ուսուցչական խմբի վերջնական կերպով կազմակերպելու առաջնակարգ խնդիրները թողած, դպրոցի յիսնամեայ յոբելեանը կատարելու ետևից են ընկած։ Որքան ողորմելի է ներկայ դպրոցամուտը անցեալ տարվայ համեմատութեամբ։ Մենք դեռ սպասում ենք հոգաբարձուների վերջնական վճռին տեսչի առաջնակարգ խնդրի լուծման վերաբերմամբ»։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Այստեղի վանքի վանահայր Աղափիրեան եպիսկոպոսը կանչված է Էջմիածին, որտեղից պէտք է ուղեկցի Կաթողիկոսին դէպի Թիֆլիս»։

—

Գուցէ ոչ մի բան մեր դպրոցական կեանքի մէջ այնքան արագ շարժման մէջ չէ, որքան հայ վարժապետների ռոճիկը, որը անդադար իջնելով իջնում է, և պակասելով պակասում է։ Այժմ սովորական է վարժապետներին 300, 200, և 150 բուբլի տարեկան ռոճիկ առաջարկելը, իսկ վարժուհիներին 100 և 120 բուբլի ռոճիկ նշանակելը,—սովորական երևոյթների շարքն է անցել վաղուց արդէն.... Դպրոցական վարչութիւնների այդ հարստահարութեան ոչ ոք չէ էլ մտածում արգելք դնել, ոչ ոք անբարեխղճութիւն չէ համարում մանկավարժական դործունէութեան նըվիրված անձինքների աշխատանքը հարստահարելը. չէ՞ որ խնայողութիւնը դպրոցի օգտին է,—մտածում են մեր դպրոցների խնայող հոգաբարձուները, և ընդունակութիւն չունեն մի քիչ աւելի հեռու նայելու և նկատելու, որ դրանով նըրանք անդիտակցաբար հեռացնում են դպրոցներից լաւ վարժապետներին և վարժուհիներին, տեղ տալով այնպիսի մարդկանց, որոնք պատրաստ են ծառայել դպրոցում մի «փոր հացի» համար, ինչպէս ժողովուրդն է ասում, ոչինչ զանազանութիւն չը դնելով դպրոցի և մի որ և է խանութի կամ դրասենեակի մէջ....

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցան պ. Ցովհաննէս Նազարեանի «Հայոց լեզուի ուսուցիչ» վերնագիրը կրող երկրորդ և չորրորդ տարվայ դասատուութեան դասագրքերը, որոնցից առաջինը այժմ լոյս է տեսել երկրորդ տպագրութեամբ, իսկ վերջինը՝ երրորդ տպագրութեամբ։ Դասագրքերը ճոխացրած են բաւական նոր յօդուածներով, որոնք ընդհանրապէս պատկանում են մեր զանազան գրողների գրչին, և հանված են կամ նրանց գրքերից կամ զանազան պարբերական հրատարակութիւններից։ Որքան մեզ յայտնի է պ. Նազարեանի դասագրքերը չեն մտցրած այն ցուցակի մէջ, որը հրատարակված է Էջմիածնում, և որը պարունակում է այն դասագրքերի անունները, որոնք կարող են գործադրվել հայոց դպրոցներում,—ուստի յատկապէս հայ վարժապետների ուշադրութեանն ենք յանձնարարում այդ դասագրքերը՝ դրանց որ աստիճանի յարմար և պիտանի լինելը որոշելու և դրանցից օգտվելու համար։ Ցանկալի է, որ այդպիսի դասագրքերի սրբագրութեան վրա աւելի ուշք դարձնէին յօրինողները. դասագրքերի մէջ տպագրական սխալները վնասակար են և աւելի անտեղի՝ քան թէ ուրիշ գրքերում։

—

Լսում ենք, որ մի պարոն մտադրութիւն ունի Թիֆլիսում բանալ քաղաքատնտեսական կուրսեր։ Կատարելապէս համակրելով քաղաքատնտեսական կուրսերի նպատակին, մենք կը ցանկանայինք որ այդ տեսակ մտադրութիւն որքան կարելի է շուտ իրագործվէր, թէև ի նկատի ունենալով մեր ժողովրդի հանգամանքները և հասկացողութիւնը, դժուար կարելի է յուսալ, որ այդ բանը աջողվէր դրամական կողմից, քանի որ ունկնդիրներ կարող են կամ չը լինել, կամ շատ քիչ լինել։ Այդ դէպքում գործի աջողութիւնը կախված է այն հանգամանքից, թէ արդեօք այդպիսի կուրսերի հիմնողը նիւթական միջոցներ ունի, որպէս զի սկզբի մի քանի տարիները կարողանայ ապահովել կուրսերի գոյութիւնը,—որից յետոյ գուցէ նրանք կարող լինէին հաստատ հիմք բռնել։

—

«Правит. Вѣстн.»-ի մէջ կարդում ենք, որ օգոստոսի 30-ին ներքին գործերի մինիստրութեան խորհրդի անդամ տայնի սովէտնիկ Գիրս (որը նորերս Էջմիածին էր եկել) ստացել է դէյստվիտելնի տայնի սովէտնիկի աստիճան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

—

«Արեւելք» լրագրում տպված է այն Շրջաբերականի պատճէնը, որ Կրօնական ժողովը խմբագրած է Պապի կօնդակի առիթով և Խառն ժողովը հաստատել և ուղարկել է Կ. Պոլսի բոլոր եկեղեցիներում կարդալու։ Այդ շրջաբերականի բաղմաթիւ օրինակներ դաւառներն էլ պէտք է ղրկվէին։

«Գերաշնորհ Առաջնորդաց, հոգեզգօն վանահարց, շնորհազարդ Քարոզչաց, հոգեշնորհ Քահանայից և համօրէն դասու օրհնեալ ժողովրդականաց, բնակելոց ընդ բարեխնամ հովանեաւ մեծազօր Կայսերութեանն Օսմանեան, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն չափու հասակի ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր հաւատացելոց որդւոց լուսոյ Կաթողիկէ և Առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց, Ողջոյն, Սէր և Խաղաղութիւն։

«Այս օրերս Պապական Հայոց Պատրիարքը Ազարեան Գերապայծառն՝ Հռովմայ Պապէն՝ իրեն և Պապական եկեղեցականաց ու հասարակութեան ուղղեալ կոնդակ մը բաժներ է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ որդւոց ոմանց մայրաքաղաքիս մէջ, կիմանանք թէ գաւառներն ևս ղրկած է։

«Ուստի ըստ որոշման Կեդ. Վարչութեան Կրօն. Ժողովոյ կը փութամք Շրջաբերականաւս ազդ առնել մեր Սրբազան պաշտօնակցաց, որ ղդուշացնեն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ հարազատ որդիքն նոյն կոնդակի մէջ պարունակեալ չինծու պատմութիւններէն և պատրողական խոստումներէն, զորս իբրև հնարք ի գործ դրած է մոլորեցնելու միամիտներն և յափշտակելու իրենց մայրենի Եկեղեցւոյ ծոցէն։

«Եկեղեցւոյ բեմէն և առանձին բացատրեցէք մեր եկեղեցւոյ սրբութիւնն և անկախութիւնը. բացատրեցէք, թէ մեր Ս. Լուսաւորիչն Հռովմ գնալով ոչ Ս. Սեղբեստրոսէն կաթողիկոսութիւն առեր, և ոչ Հռովմայ եկեղեցւոյն կամ Պապին հպատակեր է։

«Բացատրեցէք, թէ մեր Եկեղեցին հիմնեալ է ի ձեռն Սրբազան Առաքելոց Թադէոսի և Բարթուղիմէոսի, և է Առաքելական, Կաթողիկէ, Սուրբ Եկեղեցի, անկախ ի և է եկեղեցիէ և և եկեղեցապետութենէ, ունենալով Առաքելոց և Լուսաւորչին յաջորդութեամբ Եպիսկոպոսապետ և Պատուական Հայրապետ ամենայն Հայոց, որ է Սրբազնակատար Կաթողիկոս Ս. Էջմիածնի։

«Բացատրեցէք, թէ՝ մեր Սրբազան Կաթողիկոսներէն և ոչ մէկն եղած է հպատակ Հռովմայ Պապին. թէ ոչ երբէք բարիք տեսած է Պապերէն հանուր տիեզերական մի օրէնք է և մենք դեռ շատ հեռու ենք նրա վերջին, կատարման շրջանից։ Սկսեալ մարդկութեան ամենատոր, անասնական դրութիւնից, այդ զարգացման, առաջադիմութեան (прогрессъ) գործողութիւնը, շարունակ և անխոտոր ուղղութեամբ, կատարվում է բնութեան մէջ։ Այդ շարժողութիւնը երբէք չէ կարող դադարել. նա միշտ գնալու է դէպի առաջ և, ինչպէս երևում է պատմութիւնից, տգիտութիւնը և մոլորեցնող, սխալ գաղափարները միշտ յաղթվում, տեղի են տալիս ճշմարտութեանը, իսկական, խելացի գիտութեան գաղափարներին»։

Այս տեսակէտից նայելով պատմութեան վրա, Շ. Լետուրնո իր հեղինակութեան (Evolution de la morale) մէջ խորը համոզմունք է յայտնում, որ ներկայ ժամանակում տիրապետող թերի և անկատար բարոյականութիւնից, ապագայում, բնութեան ամփոփոխ օրէնքների շնորհով, առաջ կը գայ և կը զարգանայ ճշմարիտ մարդասիրական բարոյականութիւն։ Այն ժամանակ բոլոր մարդկութիւնը, թողնելով իր այժմեան մանր, շահասիրական ձգտումները, կը ոգևորվի ընդհանուր մարդկային բարեւաւութեան վսեմ գաղափարներով։

Ե. Դ.

Մեղանում դատաստանը դեռ ևս լիովին վարակված, ներշնչված է վրէժխնդրութեան զգացմունքով, որ շատ յիշեցնում է անցած, հեռաւոր ժամանակների մարդկանց դաղանային զգացմունքները։ Ամուսնական բոլոր եղանակները՝ միակնութիւնը (моногамія) ամենաընդունված և և յարգելի օրէնք է մեր մէջ, և, դրա հետ միասին, ապրում, պաշտպանվում է անձնավաճառութիւնը, պրոստիտուցիան։

Որդեսպանութիւնը օրէնքով խիստ արդելված է, չը նայելով որ ծածուկ, ահագին գործադրութիւն ունի....

Բոլոր քրէական յանցանքների մէջ, մարդասպանութիւնը ամենածանր և սոսկալի մեղք է համարվում, բայց կեանքի մէջ մենք ինչ ենք տեսնում. նոյն իսկ օրէնքի և արդարութեան պաշտպան, քաղաքակիրթ եւրոպացիները երբեմն այնպէս են ոգևորվում սրի ու վառօդի դաղափարով, որ այդ դաղանային ոգևորութեանը զոհ են բերում հազարաւոր մարդկանց կեանքեր, հեղեղում և թրջում են երկիրը մարդկային արեան խորը վտակներով.... Այն ինչ անտեսական և սոցիալական կարգադրութիւնները բարձրաձայն խօսում, բողոքում են ամեն տեղ։ Արդիւնաբերական և վաճառականական ոգին, աւելի և աւելի տարածվելով, փչացնում, վարակում է մարդկանց բարոյական զգացմունքները։ Մարդը կատարեալ տարուկ է իր շահախնդրական կրքերի առաջ. նա ոչ թէ տիրում, կառավարում է բնութեան հարստութիւնները, այլ ընդհակառակ, հարստութիւնը, ոսկին ու արծաթը իշխում, կառավարում են մարդու հոգին, նրա մտաւոր և բարոյական ընդունակութիւնները։

Վարձկանութիւնը, փողի, կապիտալի ծառայելը մի նոր տնտեսական ախտ է, որ առաջ է բերում ժամանակիս տիրապետող, հասարակական հիւանդութիւնը—անդործ պրոլետարիատ։ Աղքատների և պարապ-աշխատաւորների թիւը օր աւուր աւելանում, շատանում է արդէն։ Հասարակ ժողովուրդը, ահագին միլիոններով, հալվում—մաշվում է դառն աղքատութեան ճանկերում... Տգիտութիւնը և անասնական անբարոյականութիւնը, ծանր վարագոյրով, ճնշում է ժողովրդի միտքը և հոգին.... Մեր ժամանակի բանուորը ազատ է միայն օրէնքով (de jure) և ոչ թէ իսկապէս, իրականութեամբ (de facto)։ Նրան ոչ ոք չէ ճնշում անմիջապէս՝ բայց նա գտնվում է հարստութեան, կապիտալի զօրեղ իշխանութեան ներքոյ. իսկ վարձողի և վարձկանի մէջ փոխադարձ մարդկային յարաբերութիւնները բոլորովին կորել, ոչնչացել են ներկայումս.... Աշխատաւոր մարդը, բանուորը, վաղուց ունենալով ազատ քաղաքական իրաւունք, դեռ մինչև հիմա շարունակում է մնալ գործարանատիրոջ լիակատար իշխանութեան ու իրաւունքի տակ ճնշված։ Ահա մեր ժամանակի բարոյական պատկերը։ Դժբաղդաբար, նրանում շատ քիչ մխիթարական յատկութիւններ են երևում. դեռ ևս չափազանց թոյլ և անհաստատ է մեր բարոյական վարքը, շատ անզարգացած, ստոր և կոպիտ են մեր հոգեկան զգացմունքները, դեռ ևս շարունակ երևում, աչքի են ընկնում մեջ նախնի մարդկանց վայրենական զգուելի յատկութիւնները։

Սակայն, տեսնելով անցեալ մարդկութեան սարսափելի տգեղ կերպարանքը, նրա կեանքի խաւար և անիմաստ դրութիւնը, տեսնելով ներկայի վրդովեցուցիչ և ամօթալի պակասութիւնները, մենք, ուրախական հաստատ յոյսերով, կարող ենք աչքերս դարձնել դէպի գեղեցիկ և փայլուն ապագան։ Թէ բարոյականութեան և թէ, առհասարակ, ամեն կողմանէ՝ ապագայի պատկերը շատ դրաւիչ և սքանչելի գոյներով արդէն երևում, նկարվում է մեր առջև։ Կարելի է հանգստանալ մտաւորապէս՝ երևակայելով այդ գեղեցիկ, լուսափայլ տեսարանը։ Նրա կենսատու ճառագայթները խրախուսում, կաղդուրում են մեզ՝ ներկայ յուսահատ, անորոշ դրութեան մէջ։ «Առաջադիմութիւնը», ասում է Շ. Լետուրնո, «ընդհանուր տիեզերական մի օրէնք է և մենք դեռ շատ հեռու ենք նրա վերջին, կատարման շրջանից։ Սկսեալ մարդկութեան ամենատոր, անասնական դրութիւնից, այդ զարգացման, առաջադիմութեան (прогрессъ) գործողութիւնը, շարունակ և անխոտոր ուղղութեամբ, կատարվում է բնութեան մէջ։ Այդ շարժողութիւնը երբէք չէ կարող դադարել. նա միշտ գնալու է դէպի առաջ և, ինչպէս երևում է պատմութիւնից, տգիտութիւնը և մոլորեցնող, սխալ գաղափարները միշտ յաղթվում, տեղի են տալիս ճշմարտութեանը, իսկական, խելացի գիտութեան գաղափարներին»։

Այս տեսակէտից նայելով պատմութեան վրա, Շ. Լետուրնո իր հեղինակութեան (Evolution de la morale) մէջ խորը համոզմունք է յայտնում, որ ներկայ ժամանակում տիրապետող թերի և անկատար բարոյականութիւնից, ապագայում, բնութեան ամփոփոխ օրէնքների շնորհով, առաջ կը գայ և կը զարգանայ ճշմարիտ մարդասիրական բարոյականութիւն։ Այն ժամանակ բոլոր մարդկութիւնը, թողնելով իր այժմեան մանր, շահասիրական ձգտումները, կը ոգևորվի ընդհանուր մարդկային բարեւաւութեան վսեմ գաղափարներով։

Ե. Դ.

մեր Եկեղեցին, թէ՝ ընդհակառակն որչափ կորուստ և ինչ վտանգներ հասուցած է պապականութիւնն Հայ Ազգին։

«Բացատրեցէք, թէ՝ Հայաստանեայց Եկեղեցին լրիւ ունի իւր որդւոց հոգւոց փրկութեան միջոցներն՝ և բնաւ կարօտ չէ Հռովմայ Պապին միջնորդութեան։

«Բացատրեցէք, թէ՝ ինչպէս Պապն պապական Հայոց ժամագրքէն վերցուցեր է մեր «Սուրբ Աստուածի» «որ խաչեցարն». խառներ է Ս. Լուսաւորչէն մեզ աւանդեալ Նիկիական «Հաւատամքն», այլայլեր է Ս. Ներսէս Շնորհալւոյն «Առաւօտ լուսոյ» և այլ երգերը «Բղխումն ի Հօրէն» կցելով և «Որդւոյ»։ Թէ ինչպէս Ս. Պատարագի, աղօթից, և քարոզից յիշատակութենէն հաներ է Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսին անունն, և անոր տեղը դրեր է իւր (Հռովմայ քահանայապետին) անունը։ Թէ՝ ինչպէս Ս. Պատարագի անապակ Բաժակին մէջ ջուր խառներ է, և այլն, և այլն, զոր չեն ըրած երբէք, ոչ Առաքեալք, ոչ Լուսաւորիչ և ոչ ոք ի սրբազան Հարցն նախնեաց։

«Բացատրեցէք, թէ՝ Ունիթոռներու ձեռքով, թէ՝ Կիլիկեցւոց յարաբերութեամբ ինչ ծանր ծանր վտանգներ կրած է մեր Ազգը Պապերու երեսէն։ Արտասուելով յիշեցէք Լեհաստանի քառասուն հազար տունէն աւելի ընտիր ընտիր Հայոց կորուսան, զորս իւր եկեղեցին ուրացող Նիկոլ հայ—պապական եպիսկոպոսի մը ձեռքով, անագորոյն հնարքներով կտրելով իրենց մայր եկեղեցիէն տարաւ ի փարախ Հռովմայ, որոց խոստացեր էր, որպէս այժմ կը խոստանայ, ժամանակին Պապութիւնը, պատուով պահելու Հայոց ծէսն, լեզուն, մատեանը, և այլն. այլ աւաղ, անհետացաւ այն ամենայն և կորեաւ այնքան բիւրաւոր հայոց յիշատակի և սերնդեան հետ։

«Բացատրեցէք, թէ՝ ինչ է եղեր Պապին մեր ազգին վրայ ունեցած հոգն ու խնամքը, հայոց համար վարժարան կը բանայ Հռովմայ մէջ, Հայ-Պապական եպիսկոպոս մը կը նստեցնէ հոն, և այլն. ասոնք որոգայթ են որսողին։ Թէ՝ ինչպէս մի և նոյն ժամանակ յանուն խաղաղութեան խրոմութիւն, և յանուն միութեան երկպառակութիւն կը յարուցանէ հայոց մէջ, որպէս զի դիւրանան իրեն՝ բառնալու հայոց հայրապետութիւնը, կործանելու Լուսաւորչին աթոռը, ջնջել մեր լեզուն, ծէսն և մատեանը, և ամենայն ինչ որ ազգային է. մեր նախնեաց ճգնութեան, սրբութեան և նահատակութեան վկայարանները քարուքանդ առնել, մեր վանքեր ու եկեղեցիներն ազգի ձեռքէն հանել, և աւերել շիրիմներն ու յիշատակարաններն, որք շինուած և շաղախուած են արեամբ և հոգւով մեր երանեալ սուրբ Հարց։

«Բացատրեցէք, զգուշացուցէք մանաւանդ հաւատարիմ հայ ազգն՝ Հռովմայ Պապին անհաւատարիմ խոստմանէն, որով կը փորձէ տալ մեզ բարօրութիւն և աշխարհային բարիք, պայման դնելով, որ լինինք պապական, զոր կը մերժեմք յամենայն սրտէ և յամենայն մտաց. մեք ունիմք Աստուած, զԱստուած հարցն մերոց յերկինս, յորմէ միայն կակնկալենք փրկութիւն. ունիմք Տէր և թագաւոր յերկրի բարեխնամ Օծմանեան Պետութիւնն, յորմէ միայն կակնկալենք աշխարհային կենաց բարիք և բարօրութիւն, ինչպէս որ վայելած ենք դարերէ ի վեր, և կը վայելենք, և կօրհնենք զնա։

«Ցորդոր կարդացէք մեր սիրելի ժողովրդեան, թէ՝ պէտք է հայքս պինդ և աներկիւղ մնանք պահելով մեր նախնեաց մեզ աւանդեալ հաւատքը, ծէսն, լեզուն, մատեանը, վարդապետութիւն, աւանդութիւն, վանօրայք, տաճարք, վկայարանք, դերեզմանք, սրբութիւնք և փարեալ մնամք մեր Հայաստանեայցս առաջին լուսաւորչաց, Թադէոսի և Բարթուղիմէոսի սրբազան Առաքելոց, սուրբ Էջմիածնին, Աթոռոյն սուրբ Լուսաւորչին, սիրենք ապրիլ և մեռնիլ մեր եկեղեցւոյ դիրքն, որ մեր կեանքն է եղած։

«Բարեխօս ունելով զՍուրբ Մարիամ զԱստուածածին, զփառաւորեալ և զամէնօրհնեալ միշտ Կոյսն, և զՍուրբ Կարապետն Յովհաննէս, զառաջին լուսաւորիչս Հայաստանեայցս՝ զԹադէոս և զԲարթուղիմէոս Սրբազան Առաքեալս և զառաքելաշաւիղ յաջորդս նոցին, զմեծ խոստովանողն Քրիստոսի զպատուական հայրապետն մեր զՏէր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ զհայրն մեր առ Քրիստոս Աստուած մեր, զի զեկեղեցիս Հայաստանեայց և զմնացորդս ժողովրդեան նորա պահեսցէ ի խաղաղութեան, փրկելով յերեսէի և յաներևոյթ թշնամեաց, և զհեռացեալ որդիս նորա, զեղբարսն մեր, դարձուսցէ վերստին ի ժառանգութիւն հարցն իւրեանց, ժողովելով ի հարիս մայրենի սեպհական տան, միացուցանել ընդ երամս իւրեանց, առնել մի հօտ, մի հովիւ, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, որ է օրհնեալ յաւիտեանս, Ամէն»։

Նոյն կոնդակի վրա խօսում են և անգլիական լրագիրները, և ահա ինչ է ասում այդ մասին «Արևելքը»։ «Այս աւուր Սուրհանդակաւ առնուած սեպտ. 3 թուով «Թայմզի» մէջ կը տեսնենք իւր Կ. Պոլսոյ թղթակցին մէկ հեռագիրը Լևոն ԺԳ-ի կոնդակին վրայ. «Թայմզին» թղթակիցը կըսէ թէ այս Պապական կոնդակ շատ անդէպ էր, և առ Հայ Ազգն այնպիսի կոնդակ մը ղրկուիլը շատ անխոհեմ գործ մէր. որովհետև Հայք, որ երեք միլիոնէ աւելի են, ջերմապէս յարեալ են իրենց դարաւոր եկեղեցւոյն, զոր լքանալու դիտում չունին բնաւ։ Այս պատճառաւ, կըսէ թղթակիցը, Պապին կոնդակն Ազարեան Պատրիարքին և Լևոն ԺԳ-ի ակնկալութեան զլխովին հակառակ արդիւնք յառաջ բերաւ, զրդռելով և զայրացնելով Հայերն. և առաւել քան երբէք խոտելի ցուցնելով զՀռոմէականութիւն։ Պապն ևս, կըսէ թղթակիցը, ձախող դիրքի մը մէջ ինկաւ, վեհ. Սովթանին քրիստոնեայ հպատակաց մէկ մասին կրօնի և խղճի գործերուն միջամտելու տարօրինակ փորձ մը ընելով։

Լոնտոնի մեծ լրագրաց ուղղեալ ուրիշ հեռագրեր ևս «Թայմզի» թղթակցութեան պէս կը հաստատեն թէ Լևոն ԺԴ-ի Կոնդակն, ակնկալուած արդիւնքն յառաջ չը բերելէ զատ, բոլորովին ներհակ արդիւնք տուած է։ Նոյն թղթակիցք կը հաստատեն նաև թէ Բ. Դուռը դժգոհութիւն արտայայտած է Ազարեան Պատրիարքին՝ առանց կայսերական կառավարութիւնէն արտօնութիւն առնելու այս տեսակ թուղթ մը Տէրութեան հպատակաց մէջ ծաւալելու համար»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 27 օգոստոսի

Պատրիարքական ընտրութիւնը մէկ շաբաթուան համար ետ մնաց. փոխանակ սեպտեմբերի 2-ի ուրբաթ աւուր պիտի կատարուի՝ սեպտեմբերի 9-ի ուրբաթ օրը։ Ընտրելի անձերի կացութիւնը զգալի փոփոխութիւն չէ կրած, միայն թէ այս շաբթու քիչ մը աւելի շատցան Բարթողիմէոս եպիսկոպոսի հաւանականութիւններն։ Ազգ. Ժողովը պիտի գումարի յառաջիկայ ուրբաթ վաւերացնելու համար նորընտիր երեսփոխանները որպէս զի սրանք ևս կարենան մասնակցել պատրիարքական ընտրութեան։ Նորընտիրներն ալ մեծ մասամբ Նար-Պէյական են, և այդ պատճառաւ Քաղ. Ժողովը կուզէր որ այդ ընտրութիւնները վաւերացուին պատրիարքական ընտրութիւնէ վերջ, բայց որովհետև եկեղեցական չորս երեսփոխան ընտրված են, Կրօն. Ժողովը կուզէր որ այդ չորս եկեղեցականներն ալ մասնակցին պատրիարքական ընտրութեան. Կրօն. Ժողովոյ դիմադրութեան հանդէպ անձնատուր եղաւ Քաղ. Ժողովը։

Նար-Պէյ Խորէն եպիսկոպոս որ Կրօն. Ժողովոյ ատենապետն է, բաւական ժամանակէ ի վեր է այլ ևս ներկայ չը գտնուիր այդ ժողովոյ նիստերուն, վասն զի չը հանդուրժէր աթոռակից ըլլալ Տեղապահ Սէֆերեան Սիմոն եպիսկոպոսին։ Այդ Տեղապահի մէկ արարքը շատ պարզ կերպով ցոյց կուտայ թէ որքան ստորին զգացումներ տածելու ընդունակ են այդպիսի եկեղեցականներն։ Սէֆերեանի տեղապահութեան առաջին օրերը անստորագիր նամակ մը կը խրկուի նմա բաւական նախատական և սպառնալիքներով լի. այսպիսի նամակներ ստէպ կը խրկուին, ինչպէս ցարութիւն Պատրիարքի խրկուեցան, Նուրեան էֆենդիի, Սիմոն Պէյի, բայց կարևորութիւն մը չը տրուիր։ Սէֆերեան եպիսկոպոս—որ ճիղութիի համբաւ կը վայելէ, բայց իզուր տեղը, վասն զի նրբամիտ չէ—կը բռնէ այդ նամակին լուսանցքին վրայ կը գրէ «Առ Խորէն Նար-Պէյ սրբազան, Ատենապետ Կրօ. Ժողովոյ, առ ի միամտութիւն» և նամակը կը յղէ առ Նար-Պէյ։ Այս վերջինս սաստկագէս կը յուզուի։—Ինչպէս կարելի է որ պատրիարքական տեղապահը մտքէն անցնէ թէ հայոց արք-եպիսկոպոս մը, Կրօ. Ժողովոյ Ատենապետը կարող է այդքան ստորնանալ և առանց ստորագրութեան նախատական նամակ մը իրեն գրել, վասն զի «առ ի միամտութիւն» բառերը պարզապէս ցոյց կուտան թէ Սիմոն եպիսկոպոս համոզված է որ Խորէն եպիսկոպոսն է այդ նամակը գրողը և թէ իրեն կը վերադարձնէ այդ նամակը որպէս զի միամիտ լինի որ նամակն իրեն, Սէֆերեանի, ձեռքն հասած է։—Ի հարկէ Խորէն սրբազան չէ կարող յանձախ յարաբերութիւն ունենալ այսպիսի ստորին զգացումներ տածող եպիսկոպոսի մը հետ։—Բայց մեղաւոր է Սիմոն եպիսկոպոս։—Զենք կարծեր, եթէ ճշմարիտ է առածը որ կըսէ «ինչպէս գիտես դիմացինդ,—սրախս պէս»։

Ինչպէս առաջին նամակաւ ըսի այժմ այս և ուրիշ խնդիրները երկրորդական եղած են, միայն պապին կոնդակն է օրուան խնդիրը։ Տպագրական Տեսչութեան կողմանէ «Արևելքի» արդելք դրուեցաւ չը գրել այս խնդրոյն վրայ, բայց տպագրական տեսչութիւնը կերևի թէ մոռցած էր որ ուրիշ լրագիրներ ալ կան և անոնց արդելք չէր դրած, այնպէս որ վիճաբանութիւնը կը շարունակուէր ուրիշ թերթերու մէջ. «Արևելք» զայս տեսնելով ինքն ալ որոշեց իւր ընթացքը շարունակել. երկուշաբթի օրը պիտի ուրէ մէկ քանի օրուան ծոմը, հրատարակելով Սրուանձտեանց Գարեգին եպիսկոպոսի մէկ յօդուածն այս խնդրոյ նկատմամբ։ Արդէն այսօր հրատարակեց «Արևելք» այն շրջաբերականը որ վաղը պիտի կարդացուի Պօլսոյ մեր եկեղեցիներուն մէջ և պիտի խրկուին նաև դաւառներն։ Այդ շրջաբերականով Կրօնական Ժողովը կը զգուշացնէ մեր ժողովուրդը հռոմէական հրապոյրներուն դէմ։ Մելքիսեդէկ Մուրադեանց եպիսկոպոսն ալ հրատարակեց «Հայրենիք» շաբաթաթերթի մէջ «Թուղթ առ պապն Լէոն ԺԳ.»։ Այդ թուղթը ջերմ ընդունելութիւն գտաւ և «Արևելք» զայն պիտի արտատպէ երեքշաբթի օր։ Մկրեան տէր հայրը կը հրատարակէ այսօր յօդուած մը «Մանղումէի» մէջ, վերջապէս ընդհանուր յուզում ու շարժում։ Կարծես թէ Պօլսոյ հայերն ուրիշ հոգ ու մտածութիւն չունեն։ Կրօնական Ժողովը որոշած է նաև պապին կոնդակն ու անոր յարակից գրութիւնները խրկելու առ Կաթողիկոսն և կը կարծենք թէ Կրօ. Ժողովը պիտի խնդրէ Կաթողիկոսէ որ ինքն ալ կոնդակի դէմ կոնդակ հրատարակէ։ Կը կարծենք թէ վեհ. Կաթողիկոսը պէտք է կոյր վստահութիւն չունենայ Պօլսոյ ամեն կարգի գործիչներուն մէջ։ Տեսնուեցաւ թէ ինչպէս Պէշիկթաշի գերեզմանատան խնդրոյն մէջ Պատրիարք ու վարչութիւն չարաչար գործածեցին Վեհափառի վստահութիւնը։ Կարժէ՞ որ առ Ազարեան պատրիարքի խրկուած շրջաբերականի մը առթիւ հայոց, Կաթողիկոսը միջամտէ։

Այս առթիւ չենք կրնար չը զարմանալ աս տարօրինակ երևոյթի վրայ։ Հայերը հաղարաւոր թուառութիւններ կը կրեն, բիւրաւոր պանդխտներ կը հալին ու կը մաշին խաներու անկիւնները, Պօլսոյ փողոցներուն մէջ, աշխարհական ու եկեղեցական կը մնան անտարբեր, յուզուելու տող մը գրելու ձանձրոյթն յանձն չենք առնուր և ահա կրօնական խնդիր մը, որ խնդիր ալ չէ, ամենուն արիւնը գլուխնին կը ցատկեցնէ։ Ինչ լաւ կը լինէր որ այս եռանդն ամեն ատեն ունենայինք։ Ուր է թէ անտարբեր չը մնայինք ուրիշ կենսական խնդրոց համար ալ։

Հայկակ

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, Թագաժառանգ Ցեսարևիչ և Մեծ Իշխաններ Գէօրգի և Վլադիմիր Ալէքսանդրովիչներ և Նիկոլայ Նիկոլայեվիչ կրտսերը Նովայա-Պրագայի մօտ զօրախաղերից յետոյ, երեկոյեան ուղևորվեցան Նօտաեվկա կայարանից դէպի Սպալա։

ՊԵՇՏ, 2 սեպտեմբերի։ Ունգարական մամուլը հիացած է, որ կայսրը յանդիմանութիւն է արել Շարօսմայէր եպիսկոպոսին և դրա մէջ տեսնում է ունգարական պետական գաղափարի յաղթութիւնը համալսարանի գաղափարի վրա։ «Pester-Lloyd» համեմատելով Ֆրանց-Յովսէփ կայսրի տօստը ի պատիւ Ռուսաց Կայսրի, Նորին Մեծութեան անուանակոչութեան օրը, Շարօսմայէրին տուած յանդիմանութեան հետ, ասում է, որ կայսրի խօսքերը ոչ թէ Ռուսաստանի դէմ էին ուղղված, այլ պանսլավիստների դէմ։

ԼՕՆԴՕՆ, 2 սեպտեմբերի։ Կոնգօ պետութեան նախկին փոխարքայ Ֆրէյնսիս-դը-Վիստոն լուր է ստացել Կոնգոյից թէ՝ մայոր Բարտելօտ սպանված է իր բեռնակիրներով, Ջեմս Ուոն վերադարձաւ Ստէնլի-Ֆոլզ, նոր արշաւանք կազմակերպելու համար, Ստէնլիին օգնութիւն հասցնելու նպատակով, իսկ Տիպօ-Տիպ այժմ գտնվում է Նիան-Վէյում։

ՍԻՄԼԱ, 2 սեպտեմբերի, («Ռէյտերի գործակալութեան» հեռագիրը)։ Էմիր Աբդուրահման հաղորդում է, որ իր զորքերը գրաւեցին ապստամբների կամարդ բերդը, և ձեռք դցեցին բաղմաթիւ գերիներին, որոնց թիւում գտնվում է և Խալակ-խանի անները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Լրագիրները հաղորդում են, որ առևտրական նաւահանդիստները կառուցանելու համար հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը ենթադրում է առաջիկայ 1889 թուին ծախսել 5 միլիոն ռուբլու գումարը։—Պետերբուրգի բօրսա. Թիֆլիսի և Քութայիսի կալուածական բանկերի գրաւական թղթերը արժէն 98 ռուբլի, Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան օբլիգացիաները $82^3/_4$ ռուբլի։

ԲԵՐԼԻՆ, 3 սեպտեմբերի։ Երէկ ժամանեց այստեղ զօրախաղերին ներկայ գտնվելու համար, Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ, որին երկաթուղու կայարանում ընդունեցին Հէյսրիխ և Ալբրէխտ պրինցները և ռուսաց դեսպանութիւնը։ Մեծ Իշխանը կրում էր գերմանական համազգեստը և Սև Արծիվ շքանշանի ժապաւէնը, իսկ պրինցները՝ ռուսաց համազգեստները և Ս. Անդրէասի ժապաւէնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբերի։ «Journal de St. Petersbourg» հերքում է Փարիզի «Nouvelle Revue» ամսագրի հաղորդութիւնը իբր թէ անցեալ տարի հանգուցեալ Վիլհելմ կայսրը հրաւիրում էր Թագաւոր Կայսրին գալ Շտէտտին։

ԲԵՐԼԻՆ, 4 սեպտեմբերի։ Միւնխբրէյդում երէկ տեղի ունեցած զօրախաղը վերջացաւ հեծելազօրքի 14 գնդերի հանդիսաւոր գնացքով, որի ժամանակ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ առաջնորդում էր իր կիրասիրների գունդը։ Այնուհետև Մեծ Իշխանը գումարեց գնդի օֆիցերներին և ողջունեց նրանց։

ԶԱԳՐԵԲ, 4 սեպտեմբերի։ Շարօսմայէր եպիսկոպոսը ստացաւ պաշտօն Հռոմի պրոպագանդայի ընկերութեան մէջ։

ՎԻԵՆՆԱ, 4 սեպտեմբերի։ Կոմս Կալնոկի ուղևորվեց այսօր դէպի Ֆրիդրիխսրուէ, Իշխան Բիսմարկի հետ տեսնվելու համար։ Վիէննայի լրագիրները կարծում են որ տեսակցութեան նպատակն է պարզել՝ արդեօք քաղաքական ընդհանուր դրութիւնը որ և է փոփոխութեան ենթարկվեց թէ ոչ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Սեպտեմբերի 2-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. .	96	ր. 50	՝
Համբուրգի վրա 100 մարկ — . .	47	՝ 25	՝
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	՝ 80	՝
Ոսկի — արժէ — . .	7	՝ 75	՝
Մաքսային կուպօններ — . .	155	՝ 25	՝
Արծաթ — — — . . .	1	՝ 21	՝
Բօրսային դիսկօնտներ — . .	7 և	8%	՝
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	98	՝ 50	՝
— — — — 2-րդ —	96	՝ 62	՝
— — — — 3-րդ —	96	՝ —	՝
— — — — 4-րդ —	96	՝ —	՝
— — — — 5-րդ —	96	՝ —	՝
— — — — 6-րդ —	—	՝ —	՝
Նոր 4% փոխառութիւն.	80	՝ 25	՝
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	96	՝ —	՝
— — 2-րդ —	95	՝ 50	՝
— — 3-րդ —	95	՝ 50	՝
Ներքին 5% առաջին փոխառութ.	262	՝ 50	՝
— երկրորդ —	237	՝ 50	՝
$5^1/_2$% բէնտա	101	՝ —	՝
Ոսկեայ բէնտա.	171	՝ 75	՝
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն.	144	՝ —	՝
Նոր երկաթուղային բէնտա . . .	96	՝ —	՝
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	150	՝ —	՝
— — թղթադ. .	91	՝ 50	՝
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	96	՝ 50	՝
$5^1/_2$% գրաւական թղթեր խերսոնի կալուած բանկի.	98	՝ —	՝
6% գրաւակ. թղ. խարկովի կալ. բան.	101	՝ 50	՝
— — Պոլտավայի— —	100	՝ 50	՝
— —Պետ.Տուլսկ.— —	100	՝ 50	՝
— — Կիեւի — —	101	՝ 50	՝
— — Մոսկվայի — —	101	՝ 50	՝
— — Բեսարաբ. Տավր.—	100	՝ 25	՝
— — Նիժ. Սամար. —	101	՝ —	՝
— — Վիլնայի —	100	՝ 75	՝
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	—	՝ —	՝
— —Քութայիսի-18 և 43 տ.	—	՝ —	՝
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	653	՝ —	՝

Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	240	—	
Բիբինսկ-Բոլոգովի ընկ.	81	50	
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվի-գացիաներ	93	87	
Մոսկվայի քաղաք. օրվիգացիաներ	93	75	
Օդէսայի — —	93	—	
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ.	—	—	

Ս. Պետերբուրգի բորսայի արտադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԷՕԼԻՐԵԱՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՋՈՒՐԸ

Հաղիւ թէ ռուսաց պարֆիւմեօրական արհեստի որ և է ուրիշ արդիւնաբերութիւն ստացած լինէր այնպիսի հռչակ, ինչպէս իմ «Անուշահոտ ջուրը։» Առատ պարունակութիւն անուշահոտ նիւթերի, էժան գնի հետ հանդերձ, դարձրեց այդ ջուրը ամենագործածական և փոխարինեց օ-դը-կոլոնը, տուալէտի ջուրը և նոյն իսկ անուշահոտ իւղերը, ինչպէս զգեստները և թաշկինակները օծելու համար, այնպէս էլ մարմինը սրբելու, սենեակների պուլվերիզացիայի համար, և այլն։ Այդ ջրի հաղագիւտ առանձնայատկութիւններից մինն այն է, որ նրա դուրեկան և զօրացնող հոտը ժամանակի ընթացքում չէ զզուացնում և ով որ նրան մի անգամ ըսկսել է գործածել, նա դառնում է անհրաժեշտ պահանջ։ Անուշահոտ տարրերի աջող բաղադրութիւնը, որոնք և կազմում են այդ ջրի հիմքը, բժշկող ներգործութիւն ունի, թարմացնելով ներվները, սրտի խառնվելու, գլխացաւի և յուզմունքների ժամանակ։ Առանձին անունը «ԿԵՕԼԵՐԵԱՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՋՈՒՐԸ» տուած է նրան նոյնանման անուշահոտ օ-դը-կոլոնի՝ (eaux de Cologne) թէ իսկական կեօլնի և թէ այլ պատրաստութիւնների ջրերից ջոկելու համար։

Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր վաճառականների, իսկ Մոսկվայում Ր. Կեօլէրի և ընկ. մօտ, Նիկոլսկայա փողոցում։

№ 10. Ц. Е. О. (1—3)

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՉԻ“

Նոր տպագրութիւնները

1) Երկրորդ տարի՝ երկրորդ տիպ, հիմնովին փոփոխած։ Պարունակում է 100-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 144 երեսից։ Գինն է 35 կոպէկ։

2) Չորրորդ տարի՝ երրորդ տիպ, ճոխացրած։ Պարունակում է 60-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 308 երեսից։ Երկրորդ տիպը բաղկացած էր 272 երեսից։ Գինը առաջվանն է՝ 60 կոպէկ։

Գումարով առնողներին 20% զիջում։ Յօրինողին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։

Երրորդ տարի՝ (նախկին) երրորդ տիպ. գինն է 40 կոպէկ։ Ծախվում է միայն գրավաճառանոցներում։

Յօրինողի հասցէն. „Тифлисъ, Авлабаръ. учителю Ованесу Назарянцъ“.

1—4 (Ե. Շ.)

Տալիս եմ յատկապէս ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասեր կրկնակի-իտալական և միւս սիստեմներով. հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատանը։

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ.*

Հինգշաբթի, սեպտեմբերի 15-*ին,* ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) *շոգենաւը, նաւապետ* ԳԱՐԻԳ (GARRIGUES) *դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլոզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալերէում,* № 103.

2—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ*

Ուրբաթ, 9/21 *սեպտեմբերի,* ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւ* CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) *նաւապետ* PAUL (ՊՕԼ) *մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։*

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ.* Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, *իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ։

2—2

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

„ԱՐԱՄԲԻՆ“

ՎԷՊ։

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական գրավաճառանոցում, իշխ. Բէհբութեանի և Ազգ. Յովհաննիսեանի գործակալութեան մէջ և հեղինակի մօտ. Тифлисъ, Редакція «Арцаганкъ», Ширванзадэ.

Գինն է 75 *կոպ.*

Ճանապարհածախսով 1 *ր.*

9—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) *Առևտրական գնտեսութիւն,* 2) *Առևտրական թուաբանութիւն,* 3) *Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային),* 4) *Թուաբանութիւն համրիչի վրա,* 5) *Առևտրական թղթակցութիւն,* 6) *Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և* 7) *դեղագրութիւն։*

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-*ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի* 15-*ից, ամենայն օր, երեկոյեան* 4-*ից մինչև* 8 *ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբորատորնայա փողոցի վրա,* № 11։ *Իսկ օգոստոսի* 20-*ից Աղէքսանդր Փրիդօնովի տանը,* № 9 *Սերգիէվսկայա և Նադորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ* ԶՐԻԱՊԷՍ *եղ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.*—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

12—20 (Ե. Շ.)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(*Յէրկօվլայա փողոցում, կոնստանտինօվի տան կից, որտեղ գտնվում է Լօբկո և ընկ. տպարանը*)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱ ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ *բոլոր* ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, *ջրերի պատրաստութեան վերաբերմամբ։*

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՑԻ *մի* ՊՐՕՎԻԶՈՐԻ, *որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում։ Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և* ՋԻՎԻՆԻ *հռչակաւոր* ՖԻԼՏՐԸ, *որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ։*

Պրօվիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում։ Շնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է դիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլտերեան, մրգային և գաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, *ինչպէս օրինակ՝ Վիչիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հետազօտողների տուած կանոններին։ Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դեղաղանութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շատ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա։*

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշդութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Տարաձայնութիւններից խուսափելու համար, խնդրաբաար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի ՆՇԱՆԱԿԸ, *քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։*

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 34—50 (Ե)

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ։ Շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ։

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս՝ ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս։

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ՉԷՐՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—*Գօլովինսկի պրոսպ.* № 34 *և* ԲԱԹՈՒՄՈՒՄ—*Իշխ. Գուրիէլիի տանը։*

23—40

Լոյս տեսաւ.

ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՑԼՍ

„ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ“

Գերմ. թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան։ Գինն է 1 *ր.* 50 *կոպ.*

Նոյն թարգմանողի

ՇՄԻՏԹ,	*Բենիամին Ֆրանկլին, 2-դ տիպ.*	— *ր.*	40 *կ.*
„	*Գէորգ Վաշինգտոն, 2 տիպ*	— „	60 „
„	*Հոմերի Իլիականը, պատկերազարդ*	1 „	— „
„	*Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ*	1 „	20 „

(*Ճանապարհի ծախսը թարգմանչի վրա է*)։ *Վաճառվում են թարգմանչի մօտ՝* Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище.

4—4

Дозволено цензурою, Тифлисъ 5 Сентября 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.